

**ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՏԵՆՉԱՅՐ ՍԱԹԵՆԻԿ» ՀԱՏՎԱԾԻ ԱՌԹԻՎ**

1893 թ. մտածեցի մի բան հյուսել մեր աշխարհաշեն Արտաշես II-ի մեծ վշտերից և նրա մեծ որդու՝ նախանձոտ Արտավազդ II-ի կրքերից:

Այս նպատակի համար սկսեցի ուսումնասիրել Արտաշեսի ընտանեկան կյանքի առասպելախառն և փոթորկալի պատմությունը:

Այդ պատմության մեջ ինձ պատահեցին մութ առասպելներ, խորհրդավոր ակնարկություններ, երգերի հատվածներ, մի խոսքով, պատմության հանելուկներ, որոնց բացատրությամբ միայն կարելի էր ժամանակն, իրերն ու իրողությունները ճիշտ հասկանալ:

Այդ հանելուկներից ամենադժվարն և խորհրդավորն է «Տենչայր տիկին Սաթենիկ» հայտնի հատվածը: Ինձ թվաց, որ այս հանգույցը բանալով, իմանալով թե ինչ էր տենչում թագուհի Սաթենիկը, այդ բոլոր կռիվների ծաղիկը, կարելի էր մտնել Արտաշեսի պալատը:

Եվ հետամուտ եղա հասկանալու, թե ինչ է նշանակում.

«Տենչայր տիկին Սաթենիկ տենչանս զարտախուր խավարտ և զտից խաւարծի'ի բարձիցն Արգաւանա»<sup>2</sup>:

Կարդացի և լսեցի այս հատվածով զբաղված մի քանի բանագետների թեր ու դեմ մեկնությունները, բայց նրանք բավականություն չտվին իմ ներքին զգացմանը, որ ուրիշ բան էր որոնում այդ տենչանքի մեջ, քան ազդր, բլուր, բարձի փունջեր և այլն: Եվ ով որ լավ ծանոթացել է Արտաշեսի տան պատմությանը, նա կզգա, թե որքան կամայական, հեռու են այդ բացատրությունները և չեն կայչում այն առասպելախառն դրամայի ընդհանուր հյուսվածքի հետ, չեն գալիս նրա բնավորությանը:

Այդ հատվածում ես որոնում էի մի ավելի սիրուն և խորհրդավոր տենչանք, որ կարող էին տալ սիրահարված թագուհուն «առասպելեալ ասող» գողթան երգիչները,

<sup>2</sup> Խոր. գիրք Ա. գլ. Լ.

մտածելով, որ անկասկած դրա բանալին ժամանակն ու ժողովուրդը մեզ պետք է լինին հասցրած:

Որովհետև.

Եթե նույն օրերում «նոյն երգիչքն առասպելին ասեն այսպես. վիշապագունք գողացան զմանուկն Արտաւազդ և դև փոխանակ եղին»<sup>3</sup>, և նույն հավատը մնում է տակավին. դեռ այսօր էլ ժողովուրդը հավատում է, որ մի չար ոգի գիշերը գողանում է երեխաներին և տեղը դև դնում:

Եթե նույն երգիչքն «առասպելեալ» երգեն, ասելով. «Տեղ ոսկի տեղայր 'ի փեսայութեանն Արտաշիսի, տեղայր մարգարիտ 'ի հարսնութեան Սաթինկան»<sup>4</sup>, և տակավին այսօր էլ ժողովուրդը հարսի և փեսայի գլխին ոսկի-արծաթ է շաղ տալիս:

Եթե նույն «Գողթան երգիչքն առասպելաբանեն» Արտաշեսի անեծքը, Արտավազդի խորտակումը ազատ Մասիսի ստորոտներում, և այլն ըստ կարգին:

Եթե այն օրից դարեր անցած Խորենացին լսել է, որ «գրուցեն զմանեկ պառաւունք» և ասում է. «առ մերով իսկ ժամանակաւ՝ բազումք 'ի դարբնաց, զհետ երթալով առասպելին, յաւուր միաշաբաթուոջ երիցս կամ չորիցս բախեն զսալն, զի զօրասցին շղթայքն Արտաւազդայ...»<sup>5</sup>

Եթե Խորենացուց հետո էլ, շատ դարեր անցած, նույն սովորությունը պահպանած, մեր օրերումն էլ դարբինները ավագ ուրբաթ գիշերը երեք չորս անգամ մուրճով խփում են սալերին «զի զօրասցին շղթայքն Արտաւազդայ».

Ապա և Սաթենիկի տենչանքը՝ նույն «առասպելեալ երգի» մի կտորն ևս, կարող էր կենդանի և անկորուստ մնալ ժողովրդի անտակ հիշողության մեջ: Համենայն դեպս, եթե մնար, ժողովրդի մեջ պետք է մնար:

Առասպելը ժողովուրդն է շինում, պահում և պատմում, նրա սեփականությունն է, և նրան պետք է դիմել:

---

<sup>3</sup> Խոր. գիրք Բ. գլ. ԿԱ.: Այս առասպելը ես մի ոտանավորի նյութ եմ առել «Օրորոցագող», «Մուրճ» 1893 թ., № 2:

<sup>4</sup> Խոր. Բ. գիրք, գլ. Ծ.:

<sup>5</sup> Խոր. Բ. գիրք, Լ. ԿԱ.:

Սաթենիկի տենչանքն էլ առասպել լինելով պատմական իրողություն չի, այլ Գողթան երգիչների շինածն ու հնարածը, որոնք, իհարկե, առիթ ունեին: Խորենացին ինքը, որ այս հատվածներն «առասպելեալ» անվանելով գրել է թողել, վկայում է, որ նրանք (առասպելները) հնարովի, մտացածին բաներ են: Մի տեղ ուզենալով ընթերցողին հավատացնել, ասում է «թեև առասպել է, բայց հեռու չէ ճշմարտությունից»:

Իսկ առասպելն, ինչպես ասացի, ժողովրդի գործն է. հեկտաբար Սաթենիկի տենչանքի վրա պետք է նայել ոչ իբրև մի անհատի ցանկության, այլ մի ժողովրդի, որ առասպելի մեջ արտահայտել և դրել է անհատի սրտում:

Այս այսպես լինելով, անմիտ և անտեղի են երևում բարձի փնջերը, բլուրները և սրանց նման բաներ: Դրանք չեն կարող լինել մի ժողովրդի տենչանքի առարկաներ: Ժողովուրդի տենչանքը, ինչպես և ամեն մի զգացմունքն ու կիրքը, որ հայտնվում է զանազան ձևերով զանազան առասպելյալ անձնավորությունների ու դեպքերի մեջ, ավելի ընդհանուր, ընդարձակ և մնայուն է, մի խոսքով բոլորին հասկանալի և բոլորինը: Մինչդեռ բարձի փունջեր շոյելը, բլուրների վրա ճեմելը կարող են անհատական ցանկություն լինել, որ տեղ չունեն առասպելում:

Մի հանգամանք էլ զալիս է ապացուցանելու, որ Սաթենիկին՝ անհատինը, չի այդ տենչանքը: Պատմությունից երևում է, որ Սաթենիկ թագուհին (50 տարեկան) տոփական սեր չի ցույց տվել դեպի վիշապազունների նախարարը (80 տ. անց), այլ նախանձոտ Արտավազոն է այդպես բամբասել՝ այնքան հարգված ու մեծարված Արգամին հոր աչքիցը զցելու համար: Եվ, ինչպես համանման դեպքերում, ժողովուրդը հորինել է առասպելներ, «որք, ըստ Խորենացու, զճշմարտութիւն իրացն այլաբանաբար յինքեանս ունին թագուցեալ»:

Առասպելն ասում է, թե տիկին Սաթենիկն այրվում էր վիշապազունների (Արգավան նահապետի) տոփական սիրով<sup>6</sup>:

Եվ դրա համար էլ, որպես թե՝

Տիկին Սաթենիկը սաստիկ ցանկանում էր արտախուր խավարտ և տից խավարծի Արգավանի բարձերից:

---

<sup>6</sup> Խար. Բ. գիրք, գլ. ԽԹ.:

Սակայն ինչ են այդ արտախուր խավարտն ու տից խավարծին, որ Սաթենիկը ցանկանում է յուր սիրած Արգավանի բարձերից:

Մեկնիչներից շատերը վաղուց գտած լինելով, որ սրանք բույսեր են, միննույն ժամանակ մերժել են սրանց բուսական նշանակությունը և ուրիշ զանազան բացատրություններ են տվել առասպելին, տարակուսելով, թե ինչու համար պետք է լինեն այդ բույսերը սիրահարված թագուհու տենչանքի մեջ:

Ահա, հենց այդ հարցի պատասխանը պետք է գտնել:

Իբրև բույս ընդունելով այդ բառերը՝ արդեն կամուրջ էր ձգվում անցնելու բացատրության մի ուրիշ աշխարհ, դեպի մեկնության մի ուրիշ աղբյուր՝ բույսերն ու ծաղիկները և նրանց հնումն ունեցած խորհրդավոր նշանակությունը սիրո գործում:

Այս շավիղը բռնելով, և իբրև բույս ընդունելով այդ անհասկանալի բառերը, սկսեցի քրքրել հին սիրերգը՝ գլխավորապես իմ ընտրած առարկան հասկանալու նպատակով: Ես էլ ինձ համար բանալի ընտրեցի ժողովրդական երգերն ու կախարդանքները, սկսեցի որոնել դրանց մեջ ծաղիկների ու խոտերի կախարդական գորությունը և նշանակությունը սիրո պատմության մեջ, ենթադրելով, որ մի ժամանակ, և այսօր էլ, կախարդական գորություն ունեցող ճանաչված խոտերն ու ծաղիկները կարող էին գործածված լինել այնպես, ինչպես գիրը, մազը, շորի կտորը, որ դնում են բարձի մեջ ու տակ, և այլ տեղերում, սիրտ կախարդելու, սիրահարեցնելու նպատակով:

Իմ այս հետաքրքրության և հետամտումների ժամանակ, 1894 թ. № 3 «Արարատում» դուրս եկավ Հ. Միաբանի հոդվածը «Հայկականք Ը.», նույն հատվածի մասին:

Այս բացատրության մեջ արտախուրը վարտիքի վրայից հագնելու զգեստ էր կամ զրահ, գտիցն երկսայրի զենք և խավարծին բույս, հավանական այլաբանություն առնանդամի:

Այս բացատրությունն էլ ինձ թվաց ոչ իսկականը, չնայելով մեր բերած օրինակներին ու ապացույցներին, որոնցով Հ. Միաբանը գտել է այդ խրթին բառերի գուցե առաջին նշանակությունը:

Առաջին ասացի, որովհետև արտախուր զրահ նշանակելով հանդերձ, կարող է ունենալ և երկրորդ՝ և այն բուսական նշանակություն:

Օրինակ.

Մանուշակ ծաղկի անուն է, միննույն ժամանակ և կնոջ. այստեղ տղամարդն է յուր սիրուհուն տվել անուշահոտ մանուշակի անունը: Ծիրան և՛ եգան անուն է, և՛ պտղի. այստեղ էլ գույնի նմանությունն է պատճառը: Շան բերան՝ ծաղկի անուն է, որովհետև շատ նման է շան բերանի: Քուրդ՝ ծաղիկ է, որովհետև քրդի քոլոզի նման է պսակը: Մի խոտ էլ թուր կամ թրախոտ է կոչվում, որովհետև թրի նման է: Գառան ականջի նման մի բույս էլ գառնականջ է կոչվում, և այլն, և այլն:

Այսպես էլ արտախուր զենքի նման մի խոտ կամ ծաղիկ էլ կարող է կոչվել արտախուր, և թե արտախուրը և այլն բույսեր են, դրա համար փաստեր չեն պակասում:

Այդ նույն հոդվածում, այս հարցի հետ ծանոթանալու ցանկացող ընթերցողի համար ակնարկած էր Հ. Ստեփանեի աշխարհաբար Խորենացու<sup>3</sup> 156 մեծ ծանոթությունը, որտեղ առաջ են բերված Էմինի, Ֆլոռիվալի, Մխիթարյանների, Ուիստոն եղբայրների, Լանզուայի, Լաուերի, Ք. Պատկանյանի և այլոց կարծիքները:

Այս կարծիքներից մի քանի անծանոթների հետ ծանոթանալու համար ես ձեռք բերեցի Հ. Ստեփանեի աշխարհաբար Խորենացին և կարդացի վերոհիշյալ գիտնականների կարծիքները<sup>4</sup>:

Հանգուցյալ պրոֆ. Էմինն ասում է. «Այս հատվածը գայթակղության քար էր և է բոլոր ուսումնական հայերի համար, որովհետև այստեղ այնպիսի բառեր են հանդիպում, որոնք գործ են ածված միայն այս մի հատվածում և չեն գտնվում ուրիշ հայ մատենագիրների մեջ, այնպիսի բառեր, որոնց նշանակությունը մեկնելու ոչինչ հնար չկա»: Եվ զարմանալով թե «...ի՞նչ հիմամբ» (ֆրանսիական և իտալական թարգմանությանց մեջ) արտախուր և տից Lherbe (խոտ) են նշանակում — բոլորովին չենք հասկանում», ինքը բացատրում է այսպես.

Սաթենիկ տիկինը փափագում էր Արգավանի արտախուրը (թագը) և նորա (իշխանական) բարձերը:

Ռուսերեն թարգմանում է.

«Царица Сатеник сильно горела желанием носить диадему Аргавана и возлежать на подушках его»:

Տլոռիվալը ֆրանսերեն թարգմանության մեջ մեկնել է այսպես. Սաթենիկ տիկինը ցանկանում էր ջերմագին խոտերն... Արգավանի:

Արտախուր խավարտ և տից խավարծի այստեղ ընդհանուր անունով խոտ են կոչված:

Միսիթարյանների աջակցությամբ կատարված իտալական թարգմանությունն այսպես է.

Տիկին Սաթենիկը տենչում էր ունենալ Արգավանի սեղանից արտախուր խոտը և տից խոտիկը:

Անգլիացի Ուիստոնները՝ լատիներեն այսպես.

Սաթենիկ տիկինը սաստիկ ցանկանում էր հավասար մութ ծածկոցը Արգավանի բարձերից:

Լանգլուան՝ այսպես.

Սաթենիկ տիկինը սաստիկ ցանկանում էր Արգավանի սեղանից արտախուր խոտը և տից խոտիկը:

Լատեր՝ գերմաներեն այսպես.

Տիկին Սաթենիկը տենչանք ուներ ունենալու Արգավանի սեղանի վրայի արտախուր խոտը և տից բողբոջը:

Բոլոր այս թարգմանությունները ճիշտ չեն, և բաց են թողնված խավարտ և խավարծի բառերը: Բարձ և սեղան չէ նշանակում, և այլն:

Պրոֆեսոր Պատկանյանն առաջ է բերում (Mat. для Арм. слов., вып. II, էր. 44) Գ. Խալաթյանի (Լազարյան Ճեմարանի հայկաբանության ուսուցչապետի) մինչև այժմ մթին մնացած այս հատվածի հետևյալ բացատրությունը, որ շատ հավանական է թվում մեզ: Չարտախուր, խավարտ, տից և խավարծիլ հոտավետ ծաղիկների անուններ են: Սորա հետ ի բարձիցն և սովորական բարձի նշանակությամբ առնելով, հատվածի իմաստն այս կլիներ. «Սաթենիկ տիկինը փափագում էր հոտավետ ծաղիկներին և խոտերին Արգավանի բարձերից»: Այս ի՞նչ է նշանակում: Ոմանք հայեր մինչև այժմ ևս սովորություն կամ ավելի լավ ասեմ, հնար ունեն դյութելու. այսինքն սիրելի անձի սերը ստանալ ցանկացող կինը (երբեմն և տղամարդը) ծածուկ, առանց նորա գիտության, դնում է նորա բարձի մեջ հոտավետ խոտեր և ծաղիկներ

(կարծեն առավելապես ռեհան): Քանի մի ժամանակ անցնելուց հետո, այն խոտերը զաղտագողի բերում են, դնում են սիրվել ցանկացող անձի բարձերի մեջ, որով իբր թե բերվում են նորա բարձի տերի սերն ևս»: Գ. Խալաթյանն ասում է, թե Սաթենիկի մասին հատվածը ակնարկում է այս ժողովրդական սովորությունը, որի սկզբնավորությունն անկասկած հնագույն ժամանակներից է: Այս կարծիքն առավել հավանական համարելով, մենք այսպես և թարգմանեցինք:

Ուրեմն կորածն արդեն գտնված է յուր տեղը. ժողովուրդը տվել է յուր առասպելի բացատրությունը, որը սակայն միայն հավանական է թվում և այն էլ մի քանիսին:

Դեռ այս բացատրությունից հետո էլ շարունակում են զանազան մեկնություններ տալ ու պատրաստել: Այնպես, որ դեռ կարիք կա ուժ տալու, արծարծելու հավանականը համոզական կացուցանելու համար:

Հայկազյան բառարանում կարդում ենք.

1) Արտախուր կամ արտախուրակ «գոր օրինակ բանջար վարսաւոր» (ապա և իբրև մոլորակ)<sup>5</sup>:

Լազարդը նմանեցնում է արտախուրը պարսկերեն zardechwar-ին, որ բժշկական հայտնի խոտի անուն է, նշանակում Վուլլերսի բառարանում (նույն ծանոթ.):

Լոռեցիք մի բույս կոչում են «զաղտակուռ», դարաբաղցիք նույն բույսը «տաղտըկուռ». սա բժշկական հայտնի բույս է, և հիշեցնում է արտախուրը:

2) Խավարծի—«Փափուկ և թաւ բոյս է մատաղ. բողբոջ, ընձիւղ. որպէս թէ խավարտ տնկոյ. Տես և Խորձուիլ, որ է ծիլ որթոյ: «Կանգնեցան կացին (յորթն) կողր և տերևք, խաւարծի, և ծաղիկ և ողկոյգ. Վեցօր. Ե»:

«Ինքեանք փափուկք, և պէսպէս զարմանօք օրըստօրեայ իբրև զխաւարծի փափկանային: Ոսկ. Եփես. ԺԳ»:

Խավարծել կամ խավըրծել մի թթվաշ բույս է ըստ վանեցոց:

3) Խավարտ— բանջար ուտելի մարդկան, կանանչեղեն: «Եթէ ոք զբանջար հատանէ կամ խաւարտ: Կոչ. Զ»: «Հինգ նկանակ հաց, և խաւարտ, և աղ, և ջուր: ՃՃ»:

«Ոչ կերեալ խաւարտ, և ոչ բանջար դալար: Եւագր. Ա: Խաւարտ, որ կոչի հազար. Վրք հարց, Զ»:

4) Տից—բառ անյայտ, որպես բոյս նորաբողբոջ կամ բողբոջ բուսոյ՝:

Այս բառարանի և մատենագիրների վկայությունները:

Բայց շատ անգամ անհասկանալի, մթին բառերը հասկացվում են պարբերության ընդհանուր իմաստի ուժով: «Տենչայր» պարբերությունը մի սիրային տենչանք է և մթին բառերն են նրա նպատակը. սիրահարված տիկինը սաստիկ ցանկանում է յուր սիրած Արգամի բարձերից ձեռք բերել արտախուր խավարտ և տից խավարծի:

Արդ ինչ են այս արտախուր խավարան ու տից խավարծին:

Ինչ էլ որ լինեն, այն պարզ է, որ սիրահարվածի ուզելիք են. ըստ որում տիկին Սաթենիկը, իբրև թե, տոփական սեր էր տածում դեպի վիշապագունների Արգավան նահապետը: Այս հանգամանքը մեզ մոտեցնում է այդ խորթին բառերի ընդհանուր իմաստին. հետո գալիս են զանազան մատենագրերի վկայությունները, որ դրանք բույսերի անուններ են. ապա վրա է հասնում ժողովրդի մի սովորությունը, նույնպիսի մի տենչանք, որ ունի այսօր սիրահարված հայ գյուղացին: Ում սիրտն ու սերն ուզում է ձեռք բերել, նրա բարձի մեջ, ի թիվս այլ միջոցների, կախարդական գորություն ունեցող ծաղիկներ ու խոտեր է դնում և որոշյալ ժամանակից հետո բարձից հանում, ետ գողանում տանում, իբրև թե նրա հետ և յուր անձկալիի սերը:

Այս այդ ժողովրդի նույն տենչանքն է, որ մի ժամանակ առասպելաբանելով Սաթենիկ թագուհուն հատկացրել է նրան:

Եվ հայտնի է, որ հին հեթանոս Հայաստանում, ինչպես ուրիշ երկրներում, ծաղիկներն ու խոտերն ունեին իրանց առանձին խորհրդավոր նշանակությունը, գորությունն ու պաշտամունքը, որը մոռացություն կնշանակեր, որն ապերախտություն, որն ատելություն էր ստեղծում, որն ապահովում չար աչքից:

Անկասկած է, որ սերն էլ ուներ յուր ծաղիկները, և այդ ծաղիկները գործ էին անում սեր արծարծելու, սիրտ գրավելու համար սիրային կախարդանքների մեջ:

Եվ ինչպես այսօր կախարդանքների ժամանակ «կիպրիանոս», գիր, շորի կտոր, մազ (սրանք սովորականներն են) և այլ կախարդական գորություն ունեցող իրեր ու գրեր են դնում բարձի մեջ ու տակ, որ բարձի վրա քնողը կախարդվի (գուցե անուշ երազներով), նույնպես և այդ միևնույն գորություն ունեցող ճանաչված ծաղիկը կամ խոտը կարելի էր դնել բարձի մեջ նույն նպատակի համար, և մի՞թե կասկածի տեղ է

թողնում նույն ժողովրդի սովորությունը, որ հասել է մեզ և ավելի պերճ է խոսում քան ամեն պատմաբան:

Խոսքիս վերջում ես անում եմ մի այսպիսի ենթադրություն, որը, սակայն, ոչ հակասում և ոչ վնասում է նախընթաց ասածներին:

Ներկա դեպքում երգի կտորը կարող էր ակնարկել և մի ուրիշ սովորություն, որովհետև առասպելը միայն ասում է, թե Սաթենիկը տենչում էր Արգավանի բարձերի ծաղիկներին, իսկ այդ ծաղիկների բարձերի մեջ դնելու մասին լռում է. ո՞վ էր դրել այդ ծաղիկները՝ չի պատասխանում:

Հին մեծերն ու իշխաններն ունեին իշխանական բարձեր: Այդ բարձերը նրանց մեծության աստիճանն ու հարգն էին որոշում և իրանց այս բարձր նշանակությամբ համարվում էին սրբազան, որոնք և պետք է ժամանակի օրհնությամբ ու կախարդանքներով կրոնի տեսակետից ապահովված ու գորացած լինեին:

Այդպես մինչև օրս արևելքում իշխանները համայիլներ, գրեր, հուլունքներ, ձկան, օձի ողնաշար, ոսկրներ և այլն են կարում իրանց զգեստի վրա, որ հագնում են, ձիու վրա, որ նստում են, բարձի մեջ, որի վրա քնում են, և այլն: Եվ դրանցից մի քանիսն իշխանին ազատ են պահում հաչաղանքից, մի քանիսը նրա բախտավորության գաղտնիքն են պարունակում իրանց մեջ, մի քանիսը նրան սիրելի են կացուցանում ուրիշների աչքում, նրա հրապույրն են ամփոփում իրանց մեջ և այլն:

Հենց այդպես էլ, նույն արևելքում, և դեռ այն ժամանակ, երբ բնությունն և յուր երևույթներն էին պաշտվում, երբ աներևույթ ուժերի հետ մարդը կախարդանքներով էր հաշտվում, ապահովվում ու գորանում, կախարդանքներով հոչակված մարաց նահապետը, հեթանոս հայոց թագավորի երկրորդական Արգավանն էլ յուր իշխանական բարձերի մեջ կարող էր ունենալ զանազան ծաղիկներ, որոնք ունեին այլևայլ գորություններ, պահպանում և ներկայացնում էին իշխանի զանազան զգացմունքների ու հատկությունների գաղտնիքները, և նրանց գողանալը նույն էր, թե գողանալ նրանց գորությունը: Այս է որ ասել են Գողթան երգիչներն առասպելաբանելով, իբրև թե սիրահարված Սաթենիկը տենչում էր ձեռք բերել Արգամի բարձերից արտախուր խավարտ և տից խավարծի, այսինքն նորա սերը: